

ԱԿՕՍ

Անառակ երախաներ

ՄԱՀԻՐ ԷՕԶՔԱՆ

Տախակրթարանի փորձառություններս պատճառ եղած են միշտ, որ խորհիմ անառակության մասին եւ հարցումներ ուղղեմ եւ ինձի: Երախաները ինչո՞ւ անառակություն կ'ընեն: Ի՞նչ տեսակ անառակություններ կ'ընեն: Չափահասներուն անառակություն անուանածները տղոց համար ի՞նչ կը նշանակեն: Ինչո՞ւ այսքան զուարճալի է անառակությունը:

Մանկությանս եւ ալ բաւական անառակ էի: Անգամ մը կրակի տուած էի սեղանին ծածկոցը: Տեղացիներուն իգական սեռը արտը, իսկ տղամարդիկ գործի կ'ըլլային: Երբ էս ցերեկները ճաշելու համար տուն եկայ, սեղանին փոռած ծածկոցին եռանկիւն ծայրը լուցկիով այրեցի: Գիտնալ ուզած էի թէ պիտի վառի՞, թէ ոչ: Վառած էր, եւ եթէ մայրս կանուխ չվերադառնար, տունն ալ պիտի վառեր, մոխիր պիտի դառնար:

Յետոյ, երբ տնեցիներուն բարկանայի, տունէն կը փախչէի, առանձին կը շրջէի արտերու մէջ կամ անտառը: Մ'էկ կողմէն ալ զիրենք հսկողութեան տակ կը պահէի: Կ'ուրախանայի, դիտելով որ զիս կը փնտռեն: Երբ մութը կոխէր գաղտնօրէն կու գայի տուն եւ անուղի պարապ սենեակին մէջ, բազմոցին վրայ կը պսակէի... բայց առաւօտուն իմ անկողնինս մէջ կ'արթնանայի:

Երբ արտ կ'երթայինք աշխատելու, կը փախչէի գործէն, եւ խաղալու համար կ'ընկերակցէի ընկերներուս: Երբեմն անոնց հետ կը ստիպուէի «աշխատիլ», բայց այս մէկը հաճելի աշխատանք մըն էր: Ընկերներուս հետ կը շրջէինք գիտի բոլոր պարտէզները, կը հաւաքէինք ամենաընտիր միրգերը, վարունգները, լոլիկները եւ գետափ կ'երթայինք փիքնիք ընելու:

Անառակություն ըսուածը, իրականութեան մէջ ձեզի համար պարտադրուած կաղապարներէն դուրս գալու ջանքն է, ձեզի սահմանուած գիծէն դուրս գալու ջանքը: Տեսակ մը ապստամբություն է անառակությունը. հակառակը բարի ըլլալն է: Այսինքն խելացի ըլլալը: Այդ պատճառաւ «խելացի եղի՛ր» սպառնալիքը անառակ տղոց կ'ուղղուի: Խելք, բայց ո՞ր խելքը: Երբ խելօք ըլլալին կը պահանջուի, ո՞ր խելքի մասին է խօսքը: Որո՞ւ խելքը: Երբ քիչ մը արպտենք, տիրապետելու հասկացողություն մը դուրս



կու գայ եւ դեռ շատ բաներ...: Այս պատճառաւ եւ կը սիրեմ անառակ տղաքը: Անառակ տղաքը իրենց խելքին կը հետեւին:

Անառակ երախան, անառակ երախան է: Անառակ երախան անընդհատ հարցումներ կը հարցնէ, սորվիլ կ'ուզէ, դիպուս չի գոհանար: Անառակ երախան ամէն բանին «ինչո՞ւ» կը հարցնէ: Բան մը եթէ արգիլէք, իսկոյն կը հարցնէ «ինչո՞ւ»: Եւ եթէ ստացած պատասխանով չէ գոհացած, կը շարունակէ հարցնել: Երբեմն կտրուկ կը պատասխանէք «ինչո՞ւ»ին. «Որովհետեւ ես այդպէս կ'ուզեմ»: Բայց ձեր ուզածը չի բաւեր զինք սանձելու: Եթէ չի կրնար ուղղակի դիմադրել, ընդդիմութեան իւրապատուկ միջոցներ կը գարգացնէ, բայց երբեք չի հնազանդիր: Ի վերջոյ հաճելի բան մըն է անառակությունը:

Հայրս միշտ «Օրդի, դուն անոց պէս հոյի էլլող չես: Կարող մեծ մարդ էլլող էս» (Որդիս դուն անոց նման հովի պիտի չըլլաս: Ուսանիս մեծ մարդ պիտի ըլլաս) կ'ըսէր: Ընկերներուս հետ մինչեւ մութ գիշեր խաղ խաղացած ժամանակներս էին: Մ'էկ ալ կ'ըսէր թէ, նոյն դասարանը երկու անգամ դրկելու կարողություն չունի: Ասիկա շատ ազդած էր վրաս. այդ պատճառաւ դպրոցին մէջ բնաւ անառակ չէի, շատ զգոյշ էի բարի ըլլալու: Դասերուս անատմամբ ալ շատ ուշադիր էի, այդ պատճառաւ դպրոցի ամենայաջող աշակերտներէն կը համարուէի: Ուսու-

ցիս ալ զիս շատ կը սիրէր:

Դպրոցին մէջ, դասարանի կառավարիչը զբօսանքներու պահուն անառակություն ընող տղոց անունները գրատախտակին վրայ կը գրէր: Ուսուցիչը անունը գրուածները իրենց անառակութեան համաձայն կը զգուշացնէր, կը բարկանար եւ երբեմն ալ եթէ մեծ անառակություն մը ըրած է, կը ծեծէր: Իմ անունս բնաւ չէր գրուած այդ անառակներու ցանկին մէջ:

Բայց օր մըն ալ գրուեցաւ: Եւ երբ ուսուցիչը դասարան մտաւ, անունը գրուածներուն հարցնել սկսաւ. «Ահմէտ, նորէն ի՞նչ անառակություն ըրիր..., Ալի դո՞ւն..., Հաթիճէ՞ ..., Մուսթաֆա՞...»: Պատասխանները ամչկոտ կ'ըլլային: «Նստարանին վրայ ելայ, ներողություն կը խնդրեմ», «երբ Ֆաթման ինձի պոռաց...», «իրականութեան մէջ ես ընել չէի ուզած...», «բայց նախ ան հայհոյեց...» եայլն: Երբ հերթը ինձի եկաւ ուսուցիչը զարմանալով հարցուց. «դո՞ւն ալ» ըսելով, «դուն ի՞նչ ըրիր տեսնենք»: Ես չէի գիտեր թէ ի՞նչ ըրած էի: «Ձեմ գիտեր» կրցայ ըսել միայն: Կառավարիչը միջամտեց.

«Համշէներէն խօսեցաւ...»:

Այդ օրէն վերջ անառակությունը սովորութիւն դարձաւ ինձի համար: Մեծնալէս ետք ալ շարունակեցի անառակություն ընել, եւ պիտի շարունակեմ: Այս տարիքէն վերջ կը խելօքնա՞մ: Այդ ալ չեմ գիտեր: